ՍԱՂՄՈՍ 21

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Փառաբանություն փրկության համար	Ուրախություն ՏԻՐՈՋ փրկությամբ	Պատերազմում Թագավորի հաղթանակից հետո գոհություն (համազոր է Սաղմոս 20-ին)	Փառաբանություն հաղթանակի համար	Թագադրման արարողության համար
<u>MT ներածություն</u> Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը				
21:1-6	21:1-2	21:1-7	21:1-2	21:1-2
	21:3-4		21:3-4	21:3-4
	21:5-7		21:5-6	21:5-7
21:7-13			21:7-9բ	
	21:8-12	21:8-10		21:8-10
			21:9գ-12	
		21:11-12		21:11-12
	21:13	21:13	21:13	21:13

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոս 20 և 21 հավանաբար իրար հետ կապ ունեն: Սաղմոս 20-ը պատարագային աղոթք է պատերազմում հաղթանակի համար և Սաղմոս 21-ը հաղթանակած Թագավորին և իր զինվորներին դիմավորելու աղոթք է:

Բ. Ուշադրություն դարձրեք հավանական պարբերություններին: Համեմատելով պարբերության բաժանումները տարբեր անգլերեն թարգմանություններից, կարող ենք հաստատել, թե քանի գլխավոր ճշմարտություն է արտահայտվում այս սաղմոսում՝

1. NASB – 2
2. NKJV – 5
3. NRSV – 4
4. NJB – 6

Պարզ է, որ դժվար է համոզված լինել, թե ինչպես կարելի է տարբերել պարբերությունները: Հաճախ ընդհանրապես բացակայում է տեքստային ակնարկը: Արդի ուսանողները պետք է՝

1. ստուգեն զուգահեռները
2. ստուգեն եբրայերեն համգավորումները
3. ստուգեն փոխկապակցված թեմայի նյութը (յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ գլխավոր թեմա)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 21:1-6

[1]Ո՛վ ՏԵՐ, թագավորն ուրախանալու է Քո զորությամբ
Ու Քո փրկությամբ որքա՛ն շատ է ցնծալու:
[2]Նրա սրտի ցանկությունը տվեցիր նրան
Ու նրա շուրթերի խնդիրքը չմերժեցիր: Սելա:
[3]Քանի որ ամենաընտիր օրհնություններով հասար նրան.
Նրա գլխին մաքուր ոսկուց թագ դրեցիր:
[4]Քեզնից կյանք խնդրեց, *ու* նրան երկար օրեր տվեցիր
Հավիտյանս հավիտենից:
[5]Նրա փառքը մեծ է Քո փրկությամբ.
Պատիվ ու մեծություն դրեցիր նրա վրա:
[6]Քանզի նրա վրա հավիտենական օրհնություն դրիր,
Քո ներկայությամբ խիստ ուրախացրիր նրան:

21:1 Ուշադրություն դարձրեք հոմանիշ հանդիսացող զուգահեռականությունը «Քո զորությամբ» և «Քո փրկությամբ» խոսքերի միջև:

Տերմինը (BDB 447, ԻԳԱԿԱՆ ԵԶԱԿԻ), որը թարգմանված է փրկություն, ունի մի քանի հավանական նշանակություն՝

1. բարգավաճում՝ Հոբ 30:15
2. ազատագրում, օգնություն՝ 2 Թագ. 10:11, 1 Մնաց. 19:12, Սաղմ. 22:1
3. փրկություն՝ Ծնն. 49:18, Սաղմ. 3:2, 8, 14:7, 35:3, 53:6, 62:2, և շատ այլ համարներ
4. հաղթանակ՝ Ելից 15:2, Սաղմ. 20:6, 21:1,5, 44:4, 68:20-21, 118:14, 15, 21

ՅԱՀՎԵՆ մեր մեծ հույսն է և ուրիշը չկա բացի Նրանից: Այս լույսի ներքո, հավատարիմ հետևորդները (այս համատեքստում՝ Թագավորը) շարունակելու են՝

1. ուրախանալ – BDB 970, KB 1330, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 9:2
2. ցնծալ – BDB 162, KB 189, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ. 9:14

21:2 Այս համարը կարծես թե կապված է 20:4-ի հետ և առնչվում է ռազմական հաղթանակի համար Թագավորի աղոթքի հետ:

Ուշադրություն դարձրե՛ք երկու զուգահեռ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԲԱՅԵՐԻՆ (այսինքն՝ կատարված գործողություն):

1. տվեցիր – BDB 678, KB 733, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
2. չմերժեցիր – BDB 586, KB 602, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ

NASB, NKJV, NRSV	**«խնդրանք»**
NJB	**«աղոթք»**
LXX	**«ցանկություն»**
NEB	**«խնդրվածք»**

Այս բառը (BDB 77, KB 92) միայն այստեղ է գտնվում ՀԿ-ում: Կարծես թե համատեքստում այն վերաբերում է պատերազմից առաջ ծիսական պատարագային աղոթքի, որը հավանաբար կատարվում էր խորանում՝ տաճարում:

❖ **«Սելա»** Տե՛ս Սաղմ.3:2-ի գրառումը և Սաղմոսների Ներածություն, VII բաժինը: Որոշ մեկնաբաններ կարծում են, որ այն վերաբերում է պաշտամունքի մի կետի, որտեղ անցում է կատարվում պաշտամունքի ժամանակ կատարվող մեկ այլ գործողության (այսինքն՝ փառաբանություն, երգ, զոհ, մեկ այլ ընթերցանություն, խոնարհում, և այլն):

21:3-6 Սրանք ՅԱՀՎԵԻ կողմից Թագավորի համար իրականացվող գործողություններն են:

1. նրան բարի բաների օրհնություններով դիմավորելը (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ Ինքը դիմավորում է հաղթանակած թագավորին)
2. մաքուր ոսկուց թագ է դնում նրա գլխին (այսինքն՝ թագավորության վերահաստատում կամ պատերազմի սաղավարտի փոխանակումը արքայական թագի հետ)
3. աղոթում է նրա կյանքի համար (այսինքն՝ պատերազմի մեջ հաղթանակի համար)
4. նրա վրա է դնում՝
   ա. պատիվ (BDB 217)
   բ. մեծություն (BDB 214) Սրանք ՅԱՀՎԵԻ նկարագրություններն են (տես՝ 1 Մնաց.16:27, Սաղմ.45:3, 96:6, 104:1, 111:3), սակայն մարդկանց մեջ ՅԱՀՎԵԻ պատկերի պատճառով նրանք բաժնեկցում են այս հատկանիշները (տես՝ Սաղմ.8:5):
5. նրա վրա հավիտենական (*‘olam* պետք է թարգմանվի համատեքստում, տես՝ Հատուկ Թեմա Սաղմ.9:5-ում, գրական զուգահեռը կլինի «կեցցե թագավորը», տես՝ 1 Թագ.10:24, 3 Թագ. 1:25, 31, 34, 39, Դան.2:4, 3:9) օրհնություն դրիր:
6. Քո ներկայությամբ խիստ ուրախացրիր նրան

Միայն Թագավորը չէ, որ ընդունում է ՅԱՀՎԵԻ գործողությունները, այլ նրան միջոցով ամբողջ ուխտի ժողովուրդը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 21:7-13

7Քանի որ թագավորը ՏԻՐՈՋՆ է վստահում,
Բարձրյալի ողորմությամբ չի սասանվելու:
8Քո ձեռքը գտնելու է Քո բոլոր թշնամիներին,
Քո աջ ձեռքն ի հայտ է բերելու Քեզ ատողներին:
9Նրանց կրակի հնոցի ես նմանեցնելու Քո բարկության պահին.
ՏԵՐՆ Իր զայրույթով կլանելու է նրանց,
Ու կրակն է լափելու նրանց:
10Նրանց պտուղը վերացնելու ես երկրի երեսից
Ու նրանց սերունդը մարդկանց որդիների միջից:
11Քանի որ Քո դեմ չարություն ծրագրեցին,

Նենգություն խորհեցին, *որը* չեն կարողանալու *իրագործել:*
[12]Ահա թե ինչու ես Դու նրանց թիկունքով շրջելու,
***Երբ* Քո աղեղի լարերը նրանց դեմքին ուղղես:**
[13]Ո՛վ ՏԵՐ, փառավորվի՛ր Քո զորությամբ,
Մենք երգելու ու փառաբանելու ենք Քո հզորությունը:

21:7 «Թագավորը ՏԻՐՈՋՆ է վստահում» Սա հաստատություն է թագավորի հավատքի կողմնորոշման համար (BDB 105, KB 120, *Qal* ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, տես՝ Սաղմ. 4:5, 9:10, 13:5, 22:4, 5, 9, և այլն): Թագավորը զորություն, ուրախություն, և փրկություն ունի միայն ՅԱՀՎԵԻ միջոցով:

❖ **«Բարձրյալի ողորմությունը»** Հատուկ ուխտի տերմինը՝ «ողորմություն, գթասրտություն» (*hesed*, BDB 338, տես՝ Հատուկ Թեմա. Գթասրտություն) նշանակում է ՅԱՀՎԵԻ ուխտի հավատարմություն: ՅԱՀՎԵՆ միշտ հավատարիմ է, Թագավորը և ազգը նույնպես հավատարիմ կլինեն, եթե շարունակեն «վստահել» (BDB 105, KB 120) Նրան (տես՝ Սաղմ. 125:1): Նեեմիա 9-րդ գլուխը ՅԱՀՎԵԻ հավատարմության և Իսրայելի անհավատարմության մասին արձանագրություն է:

«Բարձրյալի» (*Elyon*, BDB 751) համար տես՝ Հատուկ Թեմա. Աստծո անունները:

NASB, LXX,	
JPSOA	**«նա չի սասանվի»**
NKJV, NRSV	**«նա չի շարժվի»**
TEV	**«նա միշտ ապահով կլինի»**
NJB	**«կպահի նրան ընկնելուց»**

ԲԱՅԸ (BDB 556, KB 55, *Niphal* ԱՆԿԱՏԱՐ) նշանակում է «ցնցվել» «երերալ» կամ «սայթաքել»: Այն կարող է կիրառվել մի քանի իմաստով՝

1. գահի վրա տեղ
2. կյանքում ապահովություն
3. աստվածահաճո ապրելակերպ

Տարբեր իմաստները տեսնելու համար տես՝ Սաղմ. 10:6, 15:5, 16:8, 21:7, 30:6, 62:2, 6, 112:6, Առակ. 10:30, 12:3: ՅԱՀՎԵԻ մեջ կա կայունություն՝ հաստատություն, բայց ոչ այս մեղավոր աշխարհում:

21:8-12 Այս համարները նկարագրում են, թե ինչ է ՅԱՀՎԵՆ (այսինքն՝ թագավորի բանակի միջոցով) անելու, եթե թագավորն ու ժողովուրդը հավատարիմ մնան:

1. թշնամիների վրա իշխանություն կտա
2. քո թշնամիները կբնաջնջվեն
3. քո թշնամիները և նրանց սերունդները կկտրվեն և կանհետանան
4. քո թշնամիները չեն հաջողի իրենց ծրագրերում (այսինքն՝ ՅԱՀՎԵԻ թագավորի դեմ ծրագրելու և ուխտի ժողովուրդը պետք է ծրագրի Նրա դեմ, Սաղմ. 21:11ա, Սաղմ. 2:1-3, 83:1-5):
5. քո թշնամիները պատերազմի մեջ նահանջելու են

Որոշ գիտնականներ (AB) այս համարները դիտարկում են որպես ՅԱՀՎԵԻ գործողությունները պատերազմի մեջ Իր ուխտի թագավորի և նրա ժողովրդի համար նկարագրություն:

❖ **«ձեռք»** Սա եբրայերեն դարձվածք է՝ գործողության զորությունը նկարագրող: Տես՝ Հատուկ Թեմա. Ձեռք:

21:9 «ՏԵՐԸ նրանց կլանելու է» Այս ԲԱՅԸ (BDB 118, KB 134, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) լիակատար բնաջնջման համար օգտագործվող դարձվածք է (տես՝ Հոբ 2:3, 10:8, Ողբ 2:2, 5, 8):

21:13 Այս համարը եզրափակում է Սաղմոսը ՅԱՀՎԵԻՆ ուղղված փառաբանությամբ:

1. Փառավորվիր – BDB 926, KB 1202, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿՆ, տես՝ 2 Թագ. 22:47, Սաղմ. 18:46, 46:10, 57:5, 11, 108:5:
2. Երգելու ենք – BDB 1010, KB 1479, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
3. Փառաբանելու ենք – BDB 274, KB 273, *Piel* ԸՂՁԱԿԱՆ

❖ **«Քո հզորությունը»** Այս մանտրան սկսում է Սաղմոսը (տես՝ Սաղմ. 21:1) և ավարտում (տես՝ Սաղմ. 21:13): Աստված է Աստվածաշնչի գլխավոր կերպարը: Այն Ի՛ր Գիրքն է, այն Ի՛ր մասին է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս են Սաղմոս 20 և 21-ը կապված:
2. Արդյո՞ք Սաղմ. 21:4 ակնարկում է հավիտենական կյանքը:
3. Թվարկե՛ք Սաղմ. 21:7-13-ում ռազմական տեսարանը: